

17419

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ա.Տ.Ա.Ն.Ա.ՅԻ

ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ՈՒՑՐԹԱՌԻՆ, ՄԷՍԷՉՈՒՍԷՑ

ԱՄՓՈՓ ԳԾԵՐ ՔԱՆԵՐԵՔ ՏԱՐՈՒԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ



1929

ՈՒՑՐԹԱՌԻՆ, ՄԷՍԷՉՈՒՍԷՑ

Ա Տ Ա Ն Ա Յ Ի
 Հ Ա Յ Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Ց
 Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
 ԱՄՓՈՓ ԳԾԵՐ ՔԱՆԵՐԵՔ ՏԱՐՈՒԱՆ
 ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
 1929
 ARMEAN EDUCATIONAL
 UNION OF ADANA

37(-91.99)
Ա-19

2010

6

2001

37(=91.99)

Ա-Ե

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ա.ՏԱ.ՆԱՅԻ

ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ՈՒԹՐԹԱՈՒՆ, ՄԷՍԷՉՈՒՍԷՑ

ԱՄՓՈՓ ԳԾԵՐ ՔՍԱՆԵՐԵՔ ՏԱՐՈՒԱՅ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ



Ա Տ Ա Ն Ա Յ Ի
 Հ Ա Յ Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Յ
 Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
 Ա Մ Փ Ո Փ Գ Շ Ե Ր Ք Ս Ա Ն Ե Ր Ե Ք Տ Ա Ր Ո Ւ Ա Յ
 Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Է Ո Ւ Թ Ե Ա Ն
 ԱՐՄԵՆԻԱ
 1929

1929

ՈՒԹՐԹԱՈՒՆ, ՄԷՍԷՉՈՒՍԷՑ

**ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ, ԱՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ
ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՓՈՒԼԵՐԸ**

Կիլիկիոյ եղեռնէն առաջ Ամերիկա գտնուող Ատանացիներու թիւը փոքր էր եւ այն ալ ցրուած վիճակի մէջ: Ուստի թէեւ երկրի զանազան վայրերու անունով կազմուած ուսումնասիրական ընկերութիւններու օրինակը համայն էր՝ բայց Ատանացիներն ալ կազմակերպելու առաջին քայլերու ղեկարութիւնները անյաղթելի կարծուած էին:

Այսու հանդերձ, Ատանայի մէջ կրթական գործի տըրուած նոր մղումն ու թափը զարթօնք մը բերին Ամերիկա գտնուող հայրենակիցներուն մէջ:

1904 թուականը Ատանայի հայութեան համար կրթական տեսակէտէ յիշատակելի փայլուն շրջան մը եղած էր: Հանրային դաստիարակութեան համար մեծ առանձնաշրնորհումներ ապահովելու շրջան մը եղած էր այն, եւ եթէ զայն կոչենք կարճատեւ ոսկեղար մը չափազանցած չենք ըլլար:

Վայրենաբարոյ թիւրք կառավարութիւնը իր գոյութեան սկիզբէն ի վեր լուսաւորութենէն կը վախնար. մանաւանդ հայերու լուսաւորութենէն, եւ ուստի իր գոյութիւնն ու հայերու տեւական ստրկութիւնը ապահովելու համար՝ ամէն արգելք կը դնէր հայ ցեղի կրթական շարժումին առջեւ: Հակառակ անողոք կառավարութեան մը դրած ամէն կարգի արգելքներուն՝ հայութիւնը կը մերժէր խաւարի մէջ մնալ, եւ ինչպէս ամէն տեղի հայեր, նոյնպէս եւ Ատանայի հայերը միշտ արթուն կը հսկէին ամենապզտիկ պատեհութիւնները, որպէս զի անոնցմէ առաւելագոյն օգուտներ քաղել կարենային:

1904 տարին այդպիսի պզտիկ պատեհութիւն մը տըրուած էր Ատանայի հայութեան: Կուսակալ Պահրի փաշա՝

67393-Ա-7.



1870-79

Սուբստանի հաւատարիմ պաշտօնեայ մը ըլլալով հանդերձ՝ տեղացի հայերու հետ բարեկամական յարաբերութիւններու մէջ մտած էր: Առաջնորդող հայերը օգտուելով այս առիթէն՝ դպրոցի նոր շէնքեր շինելու արտօնութիւն ձեռք բերած էին, ինչ որ մինչեւ այն ատեն անկարելի կը թուէր եւ հայ մանուկները գրեթէ խարխուլ եւ ապաստող շէնքերու մէջ կ'ստանային իրենց կրթութիւնը:

Քաղաքի ամէնէն կարեւոր կեդրոնին մէջ, պատմական Արգարեան Վարժարանի շուրջ եւ հայոց հին ու լըքուած դերեղմանին կից մօտաւորապէս ութը էջքըը հող՝ ազգային սեփականութիւն ըլլալով՝ կը մնար ամայի, մէկ մասը կը ծառայէր իբրեւ բակ Արգարեան Վարժարանին: Այս սեփականութեան վրայ 40 խանութներէ բաղկացեալ շուկայ մը բանալու եւ այդ խանութներու երկրորդ յարկով երկու նոր եւ մեծ դպրոցներ կառուցանելու արտօնութիւն ձեռք բերուած էր:

Այս վարժարաններու մէջ կ'ուսանէին մօտ 3000 աշակերտութիւն: Ասկէ զատ ունէինք Աղջկանց Աշխէնեան Վարժարանը՝ որ, չնորհիւ ուսուցչուհիներու թափած ջանքերուն՝ գրեթէ գօլթճի աստիճանին բարձրացած էր: Կային նաեւ Ամերիկեան Աղջկանց Գօլթճը, Ֆրանսական Աղջկանց եւ Տղոց Գօլթճները, Հայ Կաթոլիկներու Երկսեռ Վարժարանը, եւ վերջապէս Հայ Բողոքականներու Վարժարանը, որոնցմով քաղաքը հայոց համար կրթական որբանի մը սպաւորութիւնը կը թողուր: Ատանայի հայու-թիւնը նիւթական ու բարոյական մեծ զոհողութիւններով ձեռք ձգած էր այս հոյակապ յաջողութիւնները՝ որոնց արձագանգը հնչեց նաեւ Ամերիկայի փոքրաթիւ Ատանացիներու ականջին:

Երկրի այդ գեղեցիկ շարժումէն անմասն չմնալու համար՝ 1906-ին սկիզբները՝ Ութթրթաունի Ատանացիները կազմեցին Ատանայի Կրթասիրաց Բնկերութիւնը:

Երեք տարուան մէջ նորակազմ բնկերութիւնը գոյացուցած էր 885 տոլարի կոկիկ գումար մը: Բոլոր անդամ-

ները մեծ եռանդով կ'աշխատէին գործը յառաջ տանելու: Երբ 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը հռչակուեցաւ, շատեր խանդավառութեամբ կը պատրաստուէին երկիր վերադառնալ, եւ այդ նպատակով գուրդուրանքով կը խնայէին իրենց շահած սէնթերը: Բայց շուտով Ատանայի շանթահարիչ ջարդերը ցնցեցին բոլոր հայութիւնը, մասնաւորապէս յուսախաբութեան ենթարկուեցան Ատանացի հայ գաղթականները: Անմիջապէս անդամական ժողով մը գումարելով՝ կրթական նուիրական գործին համար հաւաքուած գումարը \$1000-ի բարձրացնելով ամենուն միաձայն հաւանութեամբ գրկուեցաւ Ատանայի արկածեալներուն՝ Պօղոս Փաշա Նուպարի միջոցով:

Ասկէ ետքը տիրող յուսալքութիւնը, գործերու թուրութիւնը, գործօն անդամներու ցրումը, կրթական գանձի պարապութիւնը, երկրի մէջ մնացող ազգականներու ապրուստին մտահոգութիւնը պահ մը մոռցնել տուին կըրթական գործը եւ Բնկերութիւնը մնաց ատեն մը կազմալուծուած վիճակի մէջ:

Կար նաեւ Ատանացիներու Բողոքական հատուածի որոյն Կրթասիրաց Բնկերութիւնը, որ նոյնպէս կը ձգտէր օգնել երկրի կրթական գործին:

Ջարդի սարսափներէն մեծ թիւով երիտասարդներ Ատանայէն Ամերիկա գաղթած եւ անոնցմէ շատեր հաստատուած էին Ութթրթաուն քաղաքին մէջ:

Ատանայի ջարդէն ետք Գերմանացիներ սկսան մեծ ուժերով Կիլիկիա մտնել՝ իրենց հետ տանելով եւրոպ. զարգացումը, միտքն ու արուեստը, մեքենական արհեստներն ու վաճառականութիւնը և հետզհետէ կը տիրանային ամէն ասպարէզի: Տարակոյս չկար որ ջարդի հարուածէն անտեսապէս եւ մշակութօրէն ետ մնացած հայերու ձեռքէն ամէն պատեհութիւն պիտի խլուէր, ուստի պէտք էր պայքարիլ այս նոր երեւոյթին բերած սպառնալիքներուն դէմ: Գերմանացիները կրնային մղուիլ գործակցելու հայերուս հետ եւ ոչ թէ մրցիլ մեզի հետ, եթէ բարձրագոյն կրթու-

թեան որրանի մը միջոցով նոր սերունդը պարաստուէր մտաւորական ասպարէզի մէջ: Այս դիտակցութեամբ խումբ մը ուսումնասէր Ատանացիներ խորհրդակցելով՝ որոշեցին Կիլիկիոյ կեդրոն Ատանա քաղաքին մէջ հայկական գոլէճ մը հիմնելու ձեռնարկի մը սկսիլ, եւ այդ նպատակով վերակազմեցին, 1913 Յունիս 10-ին, հին ընկերութիւնը եւ նոր անդամներով եւ Ատանայի Հայ Ուսումնասիրաց Միութիւն անունով. շուտով անոր վրայ աւելցաւ նաեւ տեղւոյն վրայ Կանանց Մասնաճիւղ մը

Միութեան առջին իսկ կողմէ մեծ ընդունելութիւն գտաւ մայր երկրի բոլոր խաւերուն մէջ: Մերսինի մէջ կազմուեցաւ՝ Տիար Պետրոս Ուրֆալեանի միջոցով՝ մասնաճիւղ մը, որ առաջին իսկ հանդէսով մը ապահոված էր 800 ոսկիի գումար մը. նաեւ Ատանայի մէջ Արգարեան Վարժարանի հանգուցեալ տնօրէն Տիար Յովհաննէս Գույումճեանի միջոցով խոստմնագիրեր ապահովուած էր մօտ 10000 ոսկիի արժէքով: Տարսոն, Տէօրթ-Եօլ (Չորք Մարգպանք), Պաղէ, Սիս եւ այլ տեղեր կը հետեւէին վերի օրինակներուն:

Բայց դժբախտարար անմիջապէս յաջորդող Պալքանեան Պատերազմը, նաեւ անոր շարունակութիւնն եղող Համաշխարհային պատերազմը՝ ժամանակի մը համար անհրաժեշտ անհրաժեշտ դարձաւ մեր ուշադրութիւնն ու գործունէութիւնը կեդրոնացնել ծովածաւալ տառապանքը կերպով մը ամօքելու գործին վրայ:

Միութիւնս տակաւին իր յոյսը կը պահէ որ օր մը մեր ժողովուրդը կը դառնայ իր մայր երկրը աւելի երջանիկ պայմաններու մէջ, եւ ընդհատուած կրթական գործը իր փառաւոր վախճանին կը հասցնէ: Բայց որպէս զի մեր ծրագրին իսկ բերումով մեր ձեռքերը ընդմիջտ չկապուէին՝ մեր դժբաղդ, ցրուած եւ տարազիր հայրենակիցներուն աղիողորմ կոչերուն ընդառաջ երթալու, Միութիւնս ընդհանուր ժողով մը գումարելով, Յունիս 15, 1929, իր-

«եւ անժամեայ յաւելուած մեր ծրագրին՝ որդեգրած է հետեւեալ որոշումը. —

«Նկատելով որ քաղաքական անողոք պայմաններու բերմունքով առժամապէս անհնարին դարձած է իրականացնել Միութեանս մեծ նպատակը, որ է Կիլիկիոյ կեդրոն Ատանա քաղաքին մէջ կրթական բարձր հաստատութիւն մը հիմնել, եւ լիայոյս ըլլալով որ ժամանակի ընթացքին տիրող արգելքները կը վերցուն եւ մենք մեր ամբողջ սրտով եւ հոգիով կը լծուինք մեր հիմնական ծրագրին:

Նաեւ նկատելով հայրենիքէ վտարանդի մեր հայրենակիցներու անձուկ վիճակը եւ փոքրիկներու տոհմային կրթութեան անյետաձգելի պէտքը՝ Միութիւնս կ'որոշէ իրբեւ հոգատար մարմին իր ուժերու սահմանին մէջ սատարել նոր սերունդի կրթութեան՝ Ատանացիներու գտնուած կարգ մը վայրերու մէջ եւ ի հարկին նպաստներով օգնել կարօտեալներուն, մինչեւ որ կացութիւնը բարւոքուի:


**ՄԻՈՒԹԵԱՆՍ ԾԱԳՈՒՄԷՆ Ի ՎԵՐ
ԱՆՈՐ ՈՒՆԵՑԱԾ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ**

1907-ին Մուշեղ Եսս —ի ձեռամբ հիմնուելիք ղպրոցին համար	\$500.00
Ատանայի Կրթասիրաց Ընկերութեան կողմէ Պօղոս Փաշայի միջոցաւ 1909-ին ղրկուած Ատանայի արկածեալներուն	1000.00
Բողոքական Հատուածի Ուսումնասիրաց Ընկերութեան Ատանա ղրկած գումարը մինչեւ Միութեանս միացման թուականը (1926)	289.23
1918-ին Միութեանս կողմէ Ամերիկայի Հայ	

Ազգային Միութեան նուիրում	500·00
Նոյն թուականին Միութեանս Կանանց Մասնա- ճիւղի կողմէ Ամերիկայի Հայ Ազգային Մի- ութեան նուիրում	100·00
1919-ին Կանանց Մասնաճիւղի կողմէ Ատանայի Առաջնորդարան զրկուած 1200 տուար արժո- ղութեամբ նոր հագուստեղէններ՝ ծախքերով միասին	1551·41
1919 Մարտ 7-ին նոյն նպատակին համար Ա- ռաջնորդարան զրկուած	345·00
1919 Յուլիս 26-ին Միութեանս կողմէ Ատանա Առաջնորդարան զրկուած՝ աքսորէն վերա- դարձած կարօտեալներուն	445·00
1920-ին Ատանա Առաջնորդարան զրկուած՝ կա- րօտեալներու համար	363·00
1922-ին Միութեանս միջոցաւ Պոսթոնի եկեղե- ցիին համար հանդանակուած անհատներէ	500·00
1922-ին Կիպրոս ապաստանած կարօտ հայրե- նակիցներու փոքրիկներուն դաստիարակման համար Լաոնագա զրկուած՝ Առաջնորդարա- նի միջոցաւ	175·00
1923 Սեպտ. 13-ին Լաոնագա զրկուած՝ նոյն նպատակին համար	236·83
1923 Դեկտ. 13-ին Լաոնագայի մէջ Հայ ազ- գային վարժարան մը հիմնելու համար նիւ- թական առաջին առաքումը	220·38
1924 Մարտ 22-ին Լաոնագա զրկուած՝ դպրո- ցի շինութեան եւ կահաւորման համար	217·00
1924 Հոկտ. 2-ին Լաոնագա զրկուած՝ դպրոցի պէտքերուն համար	224·38
1925 Ապրիլ 23-ին Լաոնագա դպրոցի շարունա- կութեան համար	241·13
1925-ին Պէյրութ զրկուած 800 տուար արժո- ղութեամբ հագուստեղէն եւ ծախքերը	864·06

1925-26 շրջանի համար Լաոնագա զրկուած պիւտճէի առաջին մասը	365·46
1926 Փետր. 18-ին Դամասկոսի աղէտին առթիւ Սահակ Կաթող.-ի կողմէն որպէս պատասխան	50·00
1926-ի շրջանին համար Լաոնագա զրկուած՝ դպրոցի մեր երկրորդ եւ վերջին առաքումը	316·19
1926 Հոկտ. 9-ին Ալեքսանտրէթ զրկուած՝ փոքրիկներու դաստիարակման համար	25·70
1926 Դեկտ. 23-ին Լաոնագա զրկուած՝ դպրո- ցի պիւտճէի առաջին մասը՝ 1926-27 տարե- շրջանի համար	365·18
1927-ին այլեւայլ դիմումներու առթիւ Միու- թեանս ըրած նուէրները	38·00
1927 Փետր. 17-ին Կանանց Մասնաճիւղի կող- մէ՝ Յունաստան ապաստանած հայրենակից- ներու փոքրիկներուն դաստիարակման հա- մար՝ Գոգինիա զրկուած.	100·00
1927 Մարտ 17-ին Լաոնագա զրկուած՝ 1926-27 տարեշրջանի պիւտճէին լրացման	243·62
1927-ին Միութեանս կողմէ հրատարակուած 2500 օրինակ Այրենարաններու ծախք (գիր- քերը ձրիարար զրկուած են Յունաստան, Կիպրոս, Պէյրութ եւ Ալեքսանտրէթ)	250·00
1927 Օգոստ. 11-ին Կանանց Մասնաճիւղի կող- մէ Պէյրութ զրկուած՝ փոքրիկներու դաստի- արակման համար	150·00
1927-ին Կանանց Մասնաճիւղի կողմէ Ալեք- սանտրէթ զրկուած հագուստեղէններ՝ 400 տուար եւ ծախքերը	461·58
1927 Սեպտ. 22-ին Յունաստան զրկուած՝ փոք- րիկներու դաստիարակման համար 1927-28 տարեշրջանի հաշուոյն	73·63
1927-ին Ալեքսանտրէթ զրկուած սօլֆաթօ	3·50

1928, Յունիս 14-ին Լաոնազա զրկուած՝ դպրոցի պիւտճէի հաշւոյն	244.50
1928 Մարտ 16-ին Լաոնազա զրկուած՝ 1928-ի պիւտճէին երկրորդ մասը	245.25
1928 Մարտ 16-ին Յունաստան զրկուած՝ 1928ի պիւտճէն գոցելու համար	125.57
1928-ին Այրենարանները արտասահման զրկե- լու համար ծախք	16.32
1928 Յունիս 6-ին Լաոնազա զրկուած՝ 1927-28 տարեշրջանի վերջին մասը	196.50
1928 Օգոստ. 21-ին Կանանց Մասնաճիւղի կող- մէ Յունաստան զրկուած	125.00
1928 Օգոստ. 21-ին Կանանց Մասնաճիւղի կող- մէ զրկուած Պէյրութ՝ փոքրիկներու դաստի- արակման	125.00
1928 Հոկտ. 11-ին Լաոնազա դպրոցի 1928-29 շրջանի պիւտճէի հաշւոյն	244.00
1928 Հոկտ. 11-ին Ալեքսանտրէթ զրկուած՝ փոքրիկներու դաստիարակման	50.00
1928 Դեկտ. 18-ին Կանանց Մասնաճիւղի կող- մէ Պէյրութ զրկուած՝ փոքրիկներու դաս- տիարակման	125.00
1929 Մարտ 17-ին Լաոնազա զրկուած՝ սոյն տարւոյ պիւտճէի լրացման	244.00
1929 Օգոստ. 22-ին Լաոնազա զրկուած	100.00
1929 Դեկտ. 16-ին զրկուած Պէյրութ՝ փոքրիկ- ներու դաստիարակման	107.00
1929 Դեկտ. 16-ին զրկուած Յունաստան՝ փոք- րիկներու դաստիարակման	50.00
Հասոյթի համար Ուօթրթաունի մէջ գնուած սեփականութեան կանխավճար (բացատրու- թիւնը տես վարը)	4539.11



Ամերիկայի Ատանայի Ուսումն. Միութեան կողմէ Պէյրութի
Սահակեան վարժարանի մէջ ընդունուած Անտաղցի սաներ 1928-ին:

1926 Փետր. 18ին դարձեալ Դամասկոսի ա-
ղէտին առթիւ Պէյրութ Հայրենակցական
Միութեան զրկուած 50.00
11րդ երեսին վրայ 6րդ տողին վերջը՝ դու-
մարը պէտք է ըլլայ 366.19:
12րդ երեսին վրայ ընդհանուր դումարը
պէտք է ըլլայ 16852.53:

16853.53

Պատ. վարչութիւն Ատանայի Ուսումն. Միութեան
Ուօրրթաուն

Խորհուրդս՝ մեծ գոհունակութեամբ տեղեկացաւ,
որ Պատ. Միութիւնդ իր մասնաւոր հոգածութեանը ա-
նարկայ ըրած է շրջանիս Ազգ. վարժարաններէն Քօֆի-
նիոյ դպրոցը:

Նայնպէս ուրախութեամբ տեսնմք ձեր կողմէ զրկը-
ւած այբեմարանները եւ ձեր փափաքին համաձայն՝
հրահանգեցինք որ անոնք տրամադրուին միմիայն աղ-
փատ եւ անօգնական ուսանողաց:

Ի լրոյ տեղեկացած ըլլալով, որ Պատ. Միութիւնդ
նիւթական աջակցութիւն մըն ալ ըրած է նոյն վարժա-
րանին՝ կը յայտնենք ձեր կրկին շնորհակալութիւնները
եւ կը խնդրենք որ բարեհաճիք շարունակել ձեր դրական
եւ գովելի գուրգուրանքը, մանաւանդ որ ներկայ Թաղ.
Խորհրդոյ համերաշխ եւ միաբան ջանքերն ալ կը յու-
սանք որ արդիւնաւէտ պիտի ըլլան, եւ մանաւանդ որ ա-
մէնէն աւելի այս գաղութին վարժարաններն են, որոնք
պէտք ունին ձեզ նման ազգասիրական զգացումներով տո-
գորուած Միութեանդ եւ միութիւններու աջակցութեանց
եւ խնամքին:

Մատուցանելով ձեր կանխայայտ շնորհակալութիւն-
ները՝

Յարգանօք

Ի դիմաց կրթական Խորհուրդի

Ատեմադպիր

Ատեմապետ

Վ. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Պ. ՄԱՐԿՈՍԵԱՆ

Մեծայարգ Տիար Ատեմապետ եւ անդամք
Ատանայի Հայ Ուսումնասիրաց Միութեան
Վարչութեան

Ուօրրթաուն

Խորհուրդիս եւ Ատանայի Հարեմակցական Միու-
թեան միջեւ կայացած համաձայնութեան վրայ, Ազգ.
վարժարան ճրի ընդունած ենք բոլոր Ատանացի ուսա-
նողները որոնց աղփատութիւնը հաստատուած է Միու-
թեան կողմէ, եւ իբր նպաստ երկու անգամով յիշեալ Մի-
ութեան ստացած ենք ի հաշիւ ներկայ 1927-28 տարե-
շրջանի 6705 1/2 տրալմի: Միւս կողմէ Հայրեմակցա-
կան Միութիւնը մեզ հաւաստիացուցած է որ դպրոցա-
կան երկրորդ կէս շրջանի համար 75 տոլար եւս պիտի
վճարէ եւ որուն ի մօտոյ ժամանումին կը սպասէ:

Յունաստանի մէջ երկար ատենէ ի վեր տիրող ընդ-
հանուր քրիզէն վարժարանի պիւտնէն եւս որոշ չափով
ազդուած ըլլալով՝ Խորհուրդս մեծ շնորհակալութեամբ
արձանագրեց յօգուտ վարժարանի ձեր նպաստը եւ կը
յուսայ որ Բ. կիսամեայի յատուկ գումարն ալ պիտի
փութացնէք: Ուրախ ենք որ ձեր գովելի օրինակին հե-
տեւելով Մարաշի Հայրեմակցական Միութիւնն ալ իր
կարգին վճարած է ձեր վարժարանի մէջ դաստիարակ-
ուող երեք Մարաշցի աշակերտներու շաբաթավճարնե-
րը: Խորհուրդս ձեր կրթասիրական բարի զգացումնե-
րուն համար յայտնելով իր ջերմագին շնորհակալութիւն-
ները՝ ձեզ ի սրտէ կը մաղթէ լուսագոյն յաջողութիւններ
սոյն ազգասիրական գործին մէջ որուն ձեռնարկած էք,
եւ գոր յառաջ կը մղէք այնքան գնահատելի եռանդով:

Մնամք Խորին Յարգանքներով


Դիւան Քօֆինիոյ Թաղ. Խորհրդոյ

Ատեմադպիր

Ատեմապետ

Գ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ

Տ. Յ. ՍԱՐԲԱՅԵԱՆ



Ամերիկայի Ատանայի Ուսումն. Միության կողմէ Պէյրուքի Հայ
Կարօլիկ Գրիգորեան վարժարանի մէջ ընդունուած Ատանացի սաներ
1928-ին: (ՄԱՆ.— Երեսները գծուածները իրենց ժիջոցներով
ուսանող աշակերտներն են):

57-211
1870-29



Ամերիկայի Ատանայի Ուսումն. Միության կողմէ Պէյրուքի Հայ
Բողոքականաց Գրիգորեան վարժարանում Ատանացի
սաներ 1928-ին:



1928—29 ՇՐՋԱՆԻՆ ՊԷՅՐՈՒԹԷՆ ԱՌՆՈՒԱԾ
ՑՈՒՑԱԿԸ

Ամերիկայի Ատանայի Ուսումն. Միութեան կողմէ քաղաքիս վարժարանաց մէջ գտնուող պաշտպանեալ աշակերտները .—

	Աշակերտ
Աղգ. Սահակեան Երկսեռ վարժարանին մէջ	120
Նուպարեան վարժարանին մէջ	10
Բողոքականաց վարժարանին մէջ	16
	—
	146

1928 — 29 շրջանին Պէշրութի վարժարանաց մէջ պաշտպանեալ աշակերտներու թիւը 146 :

Ստորեւ կուտանք նմոյշ մը ան բազմաթիւ դիմումներէն որով ուշիմ եւ ամէն քաջալերանքի արժանի պատանիներ եւ դեռատի օրիորդներ մեզմէ օգնութիւն կը խնդրեն՝ իրենց ուսումը շարունակելու: Դժբաղդաբար Միութիւնս ծանրաբեռնուած ըլլալով գաղթավայրերու մէջ գտնուող փոքրիկներու գաստիարակման գործով, բարձր կրթարան յաճախելու փափաքող աշակերտներուն դիմումներուն գոհացում չկրցաւ տալ, բայց այդ ուղղութեամբ աշխատելու համար այս նմոյշ դիմումնագիրը իբրեւ կոչ հասարակութեան ուշադրութեան կը յանձնենք, եւ կը յուսանք մօտ ատենէն լսել մեր կոչին արձագանգը: Արդեօք կա՞ն բարեսէր հայրենակիցներ որ յանձն ատենն խնամատարն ըլլալ այսպիսի ուսումնաձաբաւ աշակերտներու:

Յարգոյ Տեարք,

Այս օրերուս մեր վարժարանը լրացուց իր տարեշրջանը, որուն շրջանաւարտներէն մշկն եմ: Ես որ Պատուարժան Միութեանդ պաշտպանեալներէն եմ, պարտականութեան գիտակցութեան տարուած՝ այսօր կուգամ նախ երախտագիտական խոր զգացումներս յայտնել Միութեանդ պատկանելի վարչութեան բոլոր անդամներուն որոնք քանի մը տարիներէ ի վեր կրթական վնասումիս մէկ մասը ստանձնելով՝ չգրկեցին զիս վարժարանէն: Առ այդ ուրախութեամբ կ'իմացնեմ ձեզ քէ մեր յառաջդիմութեան համար ձեր չխնայած ջանքերն ու օժանդակութիւնը կրցած եմ արժեցնել տանելով լուրջ աշխատութիւն: Ասոր ապացոյց՝ ամալերջին քննութեան ատեն վիճակացոյցիս մէջ նշանակուած առաջնակարգ նիշերս են: Ստացայ Նախակրթարանի վկայագիրս եւ առաջնութեան համար ստացայ գանազան մրցանակներ: Ուրեմն ներկայ նամակս քող արձագանգը ըլլայ բոցավառ երախտագիտական զգացումներուս: Շնորհիւ Պատուարժան Ուսումնասիրաց Ընկերութեան՝ լրացուցած եմ տեղւոյս Ազգային Սահակեան Նախակրթարանը որ մշակեց եւ զարգացուց մեր միտքը՝ ազգային հարագատ հոգեբանութեամբ: Նախակրթարան մը աւարտելս բաւական չեմ նկատեր, մեծ հաւատով կառչած եմ ուսումս շարունակելու գաղափարին, որուն իրականցման համար մեծապէս կը խնդրեմ յարգոյ վարչութեանդ օժանդակութիւնը, ստանալու համար երկրորդական կրթութիւն: Եւ կը յուսամ որ պիտի բարեհանիք խնդրանքս նկատի առնելով օժանդակել: Չեմ սխալիր եթէ ըսեմ որ ամէնէն աւելի այս օրերուն պէտք է գովելի գտնել եւ քաջալերել ուսումը շարունակելու գաղափարին կառչող խոստմընակից աշակերտները:

Կ'աղաչեմ եւ կը յուսամ Պատուարժան Վարչութենէդ որ չպիտի գրկէք ուսումնատենչ ուսանողուի մը իր նըպատակէն եւ երախտապարտ պիտի քողոյք գիս բնդ միշտ՝ գնահատելու, փառաբանելու խանդաղատանքով մը ձեր ըրած բարեբարութիւնները:

Կանխաշայտ շնորհակալութիւններով եւ որդիական անկեղծ յարգանքներով՝

Ձեր պաշտպանեալ եւ երախտագէտ սանուհին
Ա. ԼԱՅԱԳՈՐԾԵԱՆ

ՎԵՐՉԱԲԱՆ

Ատանացիներ, հեռուոր եւ մերձուոր եղբայրներ եւ քոյրեր, Միութեանս անցեալ եւ ներկայ գործունէութեան այս ամփոփ տեղեկագիրը տալով՝ ձեզի կը դիմենք մեր ցրուած ցեղակիցներու եւ պատրաստուող նոր սերունդի կողմէ ձեզի հասցնելու համար: Հակառակ անպատմելի աղէտներու թարմ յիշատակին՝ մեր ցեղը տակաւին հաւատարիմ կը մնայ իր հաւատքին, իր նուիրական աւանդութեանց եւ ապրելու, զարգանալու եւ բարձրանալու իր կամքին: Ի զարմանս աշխարհի՝ մեր ցեղը մուրացկաններու արհամարհելի մակարդակին չէ իջած, այսօր ան իր հեռուոր եւ համեմատաբար երջանիկ եղբայրներէն ո՛չ հաց եւ ո՛չ ալ հազուստ կը խնդրէ, այլ ուսման աւելի պատեհութիւն: Ան իր ձգտումին մէջ զօրուոր է, արդեօ՞ք մենք պիտի մնանք կամազուրկ եւ հոգեպէս տկար: Գիտենք որ մեր թիւը փոքր է եւ ցրուած՝ բայց ուր որ սիրտ կայ հոն կայ նաեւ միջոց մը՝ կազմակերպութեան մը հետ անհատական յարաբերութիւն պահելու եւ տարեկան պղտիկ նուէրով մը պատասխանելու մեր փոքրիկներու կողմէ եղած կոչին: Մենք միայն հպարտ կրնանք ըլլալ այդ կողմէ պատճառող ազգային մէկ նախանձելի բարեմասնութեան մը համար:

Օգնելով մեր նոր սերունդի կրթական դրժին՝ օգնած կ'ըլլանք մեզի: Գաստիարակութեան պատեհութիւն տալով անոնց՝ կը դաստիարակենք նաեւ մենք զմեզ մեր ազգային ձգտումներու մէջ, մեր անհատական իւրաքանչեւ մէջ, նաեւ համագործակցութեան ոգիի մէջ:

Գիտութեան այս դարուն մէջ հեռուորութիւնները կտրուած են, ուկիւնտները ամփոփուած եւ աշխարհի մէջ չկայ մէկ անկիւն որ մարդկային ձայնի հասողութեան սահմանին մէջ չըլլայ: Սրտի եւ մտքի հեռուորութիւնն է որ անտեղիտալի կը մնայ: Արդեօ՞ք մեր սիրտը եւ միտքը այս անմերձենալի եւ տարամերժ դիրքի մէջ պիտի մնան:

Լառնադայի (Կիպրոս) Հոգաբարձութիւնը ընդառաջ երթալով դպրոցական 8 աշակերտներու բաղձանքին՝ աւելի բարձր կրթութեան համար՝ կարգադրութիւն ըրած է Ամերիկեան Վարժարանին Վարչութեան հետ որպէս զի մեր շրջանաւարտները առանց ժամանակ կորսնցնելու շարունակեն իրենց ուսումը Ամերիկեան հաստատութեան մէջ: Այս միջոցը՝ ներկայ պայմաններու մէջ նիւթական մեծ խնայողութիւն մ'է հայերուս համար: Այդպիսի կարգադրութիւններ կրնան ըլլալ նաեւ ուրիշ վայրերու մէջ: Բայց խնդիրը հայ վարժարանի ծրագիրը ընդունելի վիճակի մէջ պահել է՝ կարող դաստիարակներու ձեռքով, եւ այդ կրնանք ընել մենք՝ առանց մեծ զոհողութեան, եթէ տարրական պղտիկ տուրք մը յանձն առնենք եւ անոր հաւատարիմ մնանք: Ահա ձեր առջեւ բարիի եւ զեղեցիկ տեսարան մը եւ առաքելութեան ասպարէզ մը:

Ատանացիներուն հետ կը դիմենք նաեւ բոլոր Կիլիկիցիներու եւ վերջապէս ամէն հայու՝ որովհետեւ դաստիարակութիւն պահանջող մանուկները կը ներկայացընեն պարպուած Կիլիկիոյ եւ Հայաստանի ամէն վայրերը:

Վերջապէս կ'ուզենք անգամ մ'եւս կրկնել որ մեր հաւատքը մեր ցեղի ասպագայի մասին կը մնայ հաստատ, եւ թէ վերադարձի օր մը պիտի գայ եւ մենք պատեհու-

Թիւն պիտի ունենանք կրթական մեծ որրան մը հաստատելու նախապէս ծրագրուած վայրին, մեզի սիրելի պատմական Ատանայի մէջ:

Հիմա պէտք է հաւատարիմ մնանք ներկայ պզտիկ դործին, որ սակայն մեծ է իր նշանակութեամբ:



0

hope